

կրակ դնելէն ետքը օդը հանենք նե՛-
 ճրագն ու կրակը կըսկսին մարիլ : Եւ
 սոր ներհակ, եթէ անօթի մը մէջ
 միայն թթուածին կազ լեցընենք,
 ու անոր մէջ բարակ երկաթի թել
 երկնցընենք ծայրն ալ վառած աբեթի
 կտոր, աբեթը շուտ մը կը վառուի փայ-
 լուն լուսով ու կը հատնի. կրակը անկէ
 կանցնի երկաթ թելին վրայ, որ մէկ
 ծայրէն ինչուան մէկալ ծայրը կայրի
 փայլուն լուսով. թելը մէկ դիէն կը-
 հալի ու կտոր կտոր կը թափթրփի եր-
 կաթի ռքսիտ եղած : Եւ փորձերով կը
 մացուի որ կրակին ոյժ տուող կամ
 ջերմութիւն պատճառողը թթուա-
 ծին կազն է, և թէ՛ առանց ասոր
 չկրնար կրակ վառիլ : Հիմա ինքիրմէ
 կրնայ մարդ պատճառը իմանալ թէ
 կրակի մը կտոր օդին մէջ շարժելով
 կամ փչելով՝ անոր լոյսն ու ջեր-
 մութիւնը ինչու կըսաստկանայ. ըսել
 է թէ աս կերպով աւելի թթուածին
 կազ կը գտնէ ու անով կը անանի. ասոր
 մէկ նշանն ալ է ան, որ փոխանակ հա-
 սարակ օդով փչելու՝ միայն թթուա-
 ծնով փչելու ըլլանքնէ, ջերմութիւնը
 անհամեմատ կերպով աւելի կը ըլլայ :

Ինչպէս կրակը՝ նմանապէս կեն-
 դանիք ալ առանց աս կազի չեն կրնար
 ապրիլ. վասն զի Եւրոպայի բնագէ-
 տին վարդապետութեանը նայելով որ
 հիմա ամէնուն ընդունելի է, կեն-
 դանեաց շնչառութեամբ՝ օդին մէջի
 թթուածինը կը միանայ թոքին մէջի
 արեան հետ ու հոն ջերմութիւն կը
 պատճառէ. իսկ առանց աս ջերմութեան
 կենդանիք չեն կրնար ապրիլ : Եւ
 կենդանական ջերմութեան վրայ
 ուրիշ յօդուածով կը խօսինք :

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Եւրոպիայի մեծագոյն քաղաքները
 անուշահոտութիւններ կը սկսին բու-
 լել, մանր ու մեծ թռչունները
 կը գառնան կուգան իրենց երկայն

ճամբորդութիւններէն ու իրենց ա-
 նոյժ ձայներովը աւետիս կուտան մե-
 զի թէ ծառերն ու ծաղկները ծլե-
 լու վրայ են. և կարծես թէ գարնա-
 նային աղուորութեանը հոգի տուող
 ներք աս թռչուններն են :

Պիտի :

Ինչպէս հոս դրուած պատկերին
 մէջ, այսպէս ալ բոլոր մանր ու սի-
 րուն թռչուններուն մէջ առաջին տե-
 ղը բռնողը սոխակն է իր սքանչելի ձայ-
 նին համար : Պոյնը և մեծութիւնը
 ամէնուն յայտնի է : Սայրի սոխա-
 կը տարին տասը շաբաթ միայն կեր-
 գէ. իսկ ընտանեցուցածը գրեթէ
 ինը տասը ամիս : Եւ իկայ բնութիւն
 մը ունի, որ ուրիշ թռչուններուն
 ձայնը լսելով աւելի ջանքի կուգայ որ
 իր ձայնին անուշութեամբը յաղթէ
 անոնց. ինչուան թէ որ մարդ մըն ալ
 իրեն քովը կեցած երգելու ըլլայ, սո-
 խակը կրնայի որ անոր երգածին նը-
 մանցընէ. ուստի երբեմն լսած բա-
 ռերն ալ կը հնչէ : Կըսեն թէ Կղո-
 դիոս կայսեր որդին սոխակ մը ունի
 եղեր որ հոռութէն ու լատիներէն
 կը խօսի եղեր. ըսել է թէ հոռոմի և
 լատինի երգերուն նմանը կը ձևացընէ
 եղեր : Պիտիոս ալ կը պատմէ, Սա-
 թիսպոնա քաղաքը երկու սոխակ տե-
 սայ որ ինչ բան որ լսէին՝ կը հնչէին
 կըսէ՝ մարդու մը պէս :

Սովորաբար մայիսի սկիզբները
 թուրքի կընստի սոխակը, և բոյնը
 պզտի լիճերու քով ցած ծառերու
 վրայ կը դնէ, շուրջով յարդով ու կա-
 կուղ խոտերով շինած :

Թէ որ մէկը բոյնէն ասոր ձագերն
 առնել ուզէ, քանի որ փետուրնին
 չէ մեծցած՝ պէտք չէ առնէ : Եւսնց
 կերակուրը մանր կտրրտած ու պինտ
 հաւկըթի հետ խառնած լեարդ է :
 Սանդակը պէտք է մաքուր ըլլայ, չէ
 նէ եղունկնին կիյնայ, ու ճիւղերնին



1. Սոխակ: — 2. Սևազուլիս: — 3. Ծիտ: — 4. Կարմրալանջ: — 5. Եղեգնուտի ճընճ՝
զուկ: — 6. Մոխրագոյն գեղձանիկ:

կուռի : Սոխակը գիրցընելու համար խմելու ջրին մէջ քրքում ու շաքար կըդնեն ոմանք , ուտելու կերակրին մէջ ալ քիչ մը մանրած չոր թուզ , և հասարակ կերակրէն զատ չորս հինգ հատ որդ , ու քանի մը մըջիւն :

Սեպտեմբեր :

Ըս թուչունին վրան սև է , փորուն տակը մոխրագոյն . արուին գլխուն վրայ մուգ սև , էգինը խաչվէի գոյն : Բոյնը պզտիկ ծառերու վրայ կըդնէ , բաւական խոր , կլոր , ու կողովի ձևով հիւսած :

Ըս սիրուն թուչունը խիստ շատուոր կըլլայ սովորաբար , ու ծառերը տերև արձրկել սկսելուն պէս կըհասնի , բոլոր դաշտերուն մէջ կըցրուի : Սմանք պարտէզներու մէջ կուգան կընակին , ոմանք ալ մանր անտառներու մէջ շուք տեղուանք :

Նոյեմբեր :

Ըսիկայ մինակուծիւն սիրող խիստ պզտիկ թուչուն մըն է , որ սովորաբար թուփերու և ծառերու մէջ կըբնակի . գրեթէ միշտ խաչվէի գունով է՝ սև սև բծերով . պոչը և թևերուն եզերքը աւելի ճերմակ . կտուցը շիտակ : Չմեռը դաշտի պէս շիտակ տեղուանք կըբնակի , իսկ ամառը անտառներու մէջ կըբաշուի , ու սուր և անոյշ ձայնով մը կերգէ . ընդհակառակըն ձմեռը միակերպ անախորժ ձայն մը կըհանէ : Բնութեամբ վախկոտ չէ , ու շուտով կընտանենայ . անանկ որ ձմեռուան մէջ շատ անգամ բոյսերու ձմեռնոցները կըմտնէ՝ որդ ու ճճի փնտռելու համար , ամառն ալ շատ անգամ գեղացոց տնակներուն ու տանիքներուն վրայ կըդնէ բոյնը : Ըս սոր բոյնը խիստ աղուոր է , ձևը կլոր , ու քովընտի դրան պէս ծակով մը , բոյնին չորս դին դալար ճիւղերով հիւսած խիստ համեմատ ու վարպետ .

իսկ ներսը բոլոր փետուրներով պատած , որուն մէջ վեց եօթը հաւկիթ կածէ մոխրագոյն՝ կարմրկեկ բծերով :

Կարմրաւանջ :

Ըսոր վիզն ու կուրծքը կարմիր է , փորը ճերմակ : Բոլոր ամառը անտառներու մէջ կանցընէ , գարնան կըսկսի հաւկիթ ածել . և երբեմն մինչև իրեք անգամ թուխս կընստի , ապրիլ՝ մայիս և յունիս ամիսներուն մէջ : Բոյնը գետնին երեսը՝ ծառերու արմատներուն մօտ և ցած թուփերու մէջ կըդնէ՝ կակուղ խոտերով մազերով ու կաղնիի տերեւներով հիւսած . մէջն ալ կարգ մը փետուր կըշարէ : Ենամիէ վախ ունեցած ատենը բոյնին չորս դին տերեւներով ճիւղերով աղէկ մը կըպատէ . աս ճիւղերուն մէջէն քովընտի պզտիկ ծակ մը կըթողու , և ամէն անգամ բոյնէն դուրս ելլելուն՝ ան դռնակն ալ կըգոցէ ուրիշ ճիւղերով : Կը սովորաբար հինգ կամ վեց հաւկիթ կածէ մուգ գունով ու կարմիր բծերով :

Երբոր ձմեռուան ցուրտը կըկոխէ ու գետինը ձիւնով կըծածկուի , աս թուչունը բնութեամբ ընտանի ըլլալուն՝ կերթայ կտուցովը տներուն պատահանները կըգարնէ որ զինքը ներս առնեն , ու երբոր ընդունին՝ ընտանեբար կերթայ սեղանին վրայի փռընքները կուտէ , ու կարծես թէ շունորհակալութեւն նշան՝ կըսկսի մեղմ ու անոյշ ձայնով մը երգել : Բայց մինչև գարուն այսպէս կենալէն ետեւ , չկրնար համբերել , ու կընայի որ ելլէ երթայ :

Եղեգնուտի ճնճղուկ :

Եղեգնուտի ճնճղուկը միշտ ջրերու քով սէզերու եղէգներու մէջ կըբնակի . որդ ու ճճի միայն կուտէ , ու երկայն բարակ եղէգներուն վրայ անդադար կելէ կիջնայ :

1 ՏՃ. Պաշտոն գարա : Իտ . Capinera.

2 ՏՃ. Նիւթ գարա : Իտ . Sericciolo.

1 ՏՃ. Չուր գարա : Իտ . Pettiroso.

2 Իտ . Forapaglie.

Սխալներս սուր ձայն մը ունի՝ ան կը հանէ, խաղուն ձայնով չերգեր. բոյնը խիստ վարպետ կերպով կը լինէ՝ բերանը վերէն: Ի՞նչ թուշունին արուն ու էգը իրարմէ գրեթէ տարբերութիւն չունին. բայց տեսակները շատ են. մեր պատկերին մէջինը հասարակ տեսակն է:

Սխալագոյն դեղձանիկ՝:

Ի՞նչ թուշունին փետուրները թէպէտ խիստ աղուոր չեն, բայց իր աշխուժութեանը համար ճիւղուկի տեսակներուն մէջ գեղեցիկներէն մէկն է: Խտալիային մէջ շատ կը գտնուի, ու բոյնը ինչ և իցէ տեղ կը դնէ, բայց աւելի բակլայ տնկուած պարտէզներ. բոյնը դրսէն չոր խոտերով կը հիւսէ, իսկ ներսի դին կընայի որ բարակ ու փափուկ խոտերով զարդարած ըլլայ:

Կարծէ որ աս գեղեցիկ թուշուններուն ստորագրութիւնը լմնցնենք Շաթոպրիանին՝ գեղեցիկ նկարագրութեամբը:

Են են և բնութեան ժամանակք խրախճանու նութեան, յորս կոչէ նա ի հանդէս զգաստ գաստ երաժշտաց ի ծագաց աշխարհի: Փութան ճեպին առ նա ճարտար նուագածուք՝ երգս պանջնէս առեալ ի բերան, որք և զվերջ տաղիցն ցանգ գեղգեղելով յածին ընդ աշխարհ, և զնոյն յաճախ նուագեն նուագ դաշնակաւոր: Դեղձանիկ սուլէ, ծիծառն ճէ, և տատրակ մնէ. նա դադար առեալ ի բարձրաբերձն յոսոս ուռնեւոր՝ ձայն տայ սարեկին, և սարեակ չառնու յանձն ընկիծել բնաւ ի նորեկ ճարտարէն. սա պատուարեալ ընդ հիւրընկալ յարկաւ՝ խառն հնչեցուցանէ զաւազ բարբառոյն իբր առ Եւանդրիւ. և միւսն ի թաքրտի կացեալ ընդ կաղնւոյն սաղարթիւք, յերկարագոյն նուագօք վուվուս արձակէ հանգոյնս հրնչմանց որսական փողոյն որ ի թաւուտս անտառաց լսիցի: Եւ կարմրալանջն թուշուն զբարաւորաւ կացեալ համբարանոցին, ուր և զանապառնձն իւր եղեալէ զբուռնիկ, ճռուողէ գերգն սուղ: Այլ

1 Իտ. Sterpazzola.

2 Շաթոպրիան (Chateaubriand) գաղղիացւոց կենդանի մատենագիրներուն մէջ ամէնէն անուանին ու ամէնէն ճարտասանը կըսեպուի. և իրեն մեծ պարծանքը աս է որ իր ժամանակակից մարդիկներուն առջև այսչափ մեծ համարմունք ու պատիւ ունեցեր է: Իր գրութեանցներուն մէջ ամէնէն հուշակաւորը, և իր անունը անմահացնողը ՈՒՅ ԲԵՐՈՒՄ ԵՒ ԵՒԵՆ ԸՍՏԱԾ ԳԻՐԵՆ է, բարեպաշտ հոգեով ու շատ գեղեցիկ ճարտասանութիւն գրութեամբ. և աս հատուածը անկէ թարգմանած է:

սոխակ իւրումն անխայէ ձայնի, և չլամի զի ի նոցայն ընկցի նուագս. սպասեալ մնայ ժամուն յորում լուեալ գաղարիցեն այլք, և պարտ անձին համարի գերեկորին հանգիսցն զարդարել զմասն:

Յորժամ կարապետք լուութեան գիշերոյ և վերջապա՞ք տուրնընային աղմկաց մարտ եղեալ կուգին զթիկամբք լերանց և զափամբք գետոց, ի խորս անտառաց և ի ծերպս հեղեղատաց, յորժամ տակաւ լուռ լինին մայրիք, և այլ ոչ ևս տատանին սաղարթք, և ոչ ծածանին դաւարիք, և լուսին յերկինս կայ, և մարդ ունկնդիր է յանդուրու, յայնժամ ապա երգաբանն այն արարածոց քաղցրաձայն հնչմամբ առնու նուագել զփառս Աբարչին: Գանգիւնս արձակէ նախ զուարճալից բերկրութիւն՝ որ անդրէն կընին ի լերանց, և ահա նուագ խառնաձայն. ապա դաշն սկսեալ ի սուրն վազէ. անտի յաղտն իջեալ, և անդէն ի հաւեղն վերտնէ: Կայ երբեք և դադարէ, և դարձեալ առնու յուշիկ նուագել, և միւս ևս անգամ ուժգին խանդիւ ճռուողէ. սիրտն որսարբեալ է ուրախութեամբ, սիրտն որս բաբախէ սիրոյն ուժգնութիւն: Անդէն և անդ նուաղի ձայն նորս, և լուէ խօսնակն. այլ վերստին առնու զայլ իմն յեղանակ նոր և գեղեցիկ: Եւ զի ողբերգական հնչէ նուագ թալացեալ և յեղեղուկ. և է զի միաձայն յեղանակօք զնոյն նուագս ողբերգէ ըստ վաղեմի ազգացն անպաճոյճ և թախծագին երգաբանութեանց: Բայտամ անգամ և տրտմութեան է երգն տարացոյց, և ոչ ուրախութեան միայն. զի ահա երգէ և որդեկորոյն թուշիկ. և յեղանակն նոյն է, յեղանակ ուրախութեան, զի և չիք նորս այլ յեղանակ. սակայն քաջամուտ արուեստին գոյով զմասն և եթ փոփոխէ երաժիշտն, և ուրախութեան նուագքն ի կեղեցիկանս փոխին և յողբականս:

Որք անժառանգելն կամին զմարդ, և կապտել զնա յիշխանութենէն զոր ստացեալ ունի նա ի վերայ արարածոց, կամին իմն յայտ առնել թէ չիք ինչ յաշխարհի որ վասն նորս իցէ արարեալ: Եւ ահա օրինակ իմն, թուշոցն քաղցրաձայնութիւնք այնպէս հնազանդին մարդկեղէնս լսեցաց, զի թէպէտ և ի բաց վարիցեն յանտառաց զհիւրսդ, և ըզբոյնս նոցա յաւարի առնուցուս, և զնոսա հալածական տանիցիս, և զինուք և թակարդիւք վերս ի վերայ դնիցես, հարկանել հարկանես զնոսա անհրնարին ցաւովք, այլ լուեցուցես ոչ բնաւ: Քանզի նմին հակառակ, հարկ ի վերայ կայ նոցա զբօսանս մեզ պատրաստել, հարկ ի վերայ կայ նոցա հրամանաց Արարչին կամակատար լինել: Ի գերութեան իմն մեք զնոսա, և նոքա ընուն զտունս մեր երգոցն նուագօք: Այսպէս ուրեմն և ի ցաւս անգամ գտանին դաշնակութիւնք. ոչ ապաքէն և ամենայն այր տառապեալ յօժարամիտ յերգս իցէ: Եւ համառօտ, թող հաւորսն անագորոյն խժաւան ճարտարութեամբ բրեսցէ զաչս սոխակին. նա և ևս քաղցրաձայն գեղեցիկացէ գերգս իւր: Եւ որս այս օգապար հոմեր՝ երգովք զկենսանս պաճարէ, և զգեղեցկագոյնս ի տաղից իւրոց ի խաւարել ակա նողեացն յօրինէ...

Այս հաւելի զբրիտոնէին բերէ ի կենցաղուն գձգրիտ օրինակ. հանգոյն նմին միայնութեան է սիրող քան աղմկաց աշխարհի, և երկնից քան թէ երկրիս ըզձակերտ. և ի ձայն բարբառոյն բարբառնէ անդադար զսքանչելիս Արարչին: